ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/100-Պ

ք. Երևան «05» դեկտեմբեր 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«Բլիզարդ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Արմենուհի Խաչատրյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

կնքեցին ծառայությունների վճարովի մատուցման սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով մատուցել «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի բացման հանդիսավոր արարողության շրջանակներում հյուրասիրության կազմակերպման ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ)՝ 450 (չորս հարյուր հիսուն) անձի համար, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատուցված Ծառայությունները և վճարել դիմաց սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում:

1.2. Ծառայությունների մանրամասն նկարագիրը սահմանվում է սույն Պայմանագրին կից Հավելված 1-ով:

1.3. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցվում են 2022թ.դեկտեմբերի 5-ին, հյուրասիրությունն իրականացվում է ժամը 18:30-ից մինչև 20:00-ն:

2. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

2.1. Կատարողը երաշխավորում է Ծառայությունների մատուցման համար իր պատշաճ մասնագիտական որակավորումը, փորձը, ինչպես նաև Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ միջոցների առկայությունը:

2.2. Կողմերը երաշխավորում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը, և որ ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. ***Պատվիրատուն իրավունք ունի***՝

3.1.1. Կատարողից պահանջել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցել ամբողջությամբ, պատշաճ որակով և սահմանված ժամկետում,

3.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը՝ պահանջելով տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

3.1.3. Պահանջել Կատարողից աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև մատուցված Ծառայությունների արդյունքն ընդունելիս,

3.1.4. Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կատարողին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ,

նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնում է հանձնման-ընդունման ակտը չհաստատելու հիմնավորում՝ նշելով մատուցված Ծառայություններում հայտնաբերված թերությունները, ինչի հետևանքները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.4. Այն դեպքում, եթե Պատվիրատուն սույն Պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետում չի հաստատում հանձնման-ընդունման ակտը և Կատարողին չի ներկայացնում դրա հիմնավորումը, ապա Պատվիրատուն պարտավորվում է սույն Պայմանագրի 4.2. կետում սահմանված ժամկետին հաջորդող առաջին իսկ աշխատանքային օրը հաստատելու Կատարողի կողմից ներկայացված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը ու Պայմանագրի 5.2. կետով սահմանված ժամկետում վճարելու դրանով նախատեսված գումարը:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է 2 937 300 (երկու միլիոն ինը հարյուր երեսունյոթ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ (մեկ անձի հյուրասիրության արժեքը կազմում է 6 527.33 (վեց հազար հինգ հարյուր քսանյոթ ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը)՝ համաձայն Հավելված 1-ով սահմանված նախահաշվի: Ծառայությունների ընդհանուր արժեքը ներառում է բոլոր կիրառելի հարկերը, ինչպես նաև Ծառայությունների մատուցման համար Կատարողի կողմից իրականացվելիք բոլոր ծախսերը:

5.2. Պատվիրատուն մատուցված Ծառայությունների դիմաց վճարումն իրականացնում է հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

5.3. Սույն Պայմանագրով վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.4. Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը: Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կատարում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը

6. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

6.1. Սույն Պայմանագրի պայմաններին, Պայմանագրից բխող գործողություններին, ինչպես նաև Պատվիրատուի նախագծերի, դրանց նկարահանման ընթացքի և բովանդակության վերաբերյալ ողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ փաստաթղթերը), բացառությամբ զանգվածային տեղեկատվության միջոցներում առկա տեղեկատվության (եթե այդպիսին առկա է), գաղտնի է (այսուհետ՝ Գաղտնի տեղեկատվություն) և Կատարողի կողմից չի կարող տրամադրվել որևէ երրորդ անձի, բացառությամբ Պատվիրատուի նախապես տրամադրված գրավոր համաձայնության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

6.2. Կատարողը պարտավոր է Պայմանագրի գործողության, ինչպես նաև դրան հաջորդող 3 (երեք) տարիների ընթացքում, ապահովել համապատասխան տեղեկատվության գաղտնիությունը և պատշաճ պաշտպանությունը՝ գործադրելով առնվազն այնպիսի ջանքեր, ինչպիսիք կգործադրեր իր իսկ նման տեղեկատվության պաշտպանության համար:

7. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

7.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

7.2. Տուժանքների վճարումը չի ազատում Կողմերին սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումից, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

8. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

9.9. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կատարող**
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	**«Բլիզարդ» ՍՊԸ**
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ. Հովսեփյան 26	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1
ՀՎՀՀ՝ 01540062	ՀՎՀՀ՝ 02577644
«Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 2050022082671001	«Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 1570022641230100
Հովհաննես Մովսիսյան *Գործադիր տնօրեն*	**Արմենուհի Խաչատրյան** *Տնօրեն*

4	Բնական հյութ	1լ	38	1100	41800
5	Կոլա/Ֆանտա/Սպրայտ	1լ	38	600	22800
6	Հանքային ջուր	0,5լ	40	250	10000
7	Աղբյուրի ջուր	0,5լ	200	250	50000
	Սեղանի Ծաղկային ձևավորում				200000
	Սպասարկում/սպասքի տրամադրում/ տրանսպորտ	անձ	450	1300	585000
			Ընդամենը՝		**2937300**
			Գինը մեկ անձի համար		6527

Պատվիրատու

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ. Հովսեփյան 26

ՀՎՀՀ՝ 01540062

«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001

Հովհաննես Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Կատարող

«Բլիզարդ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1

ՀՎՀՀ՝ 02577644

«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570022641230100

Արմենուհի Խաչատրյան
Տնօրեն